ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆՆ ԱՌՆՉՎՈՂ ՀԱՐՑԵՐԸ ՎԱՀԱՆ ՏՈՏՈՄՅԱՆՑԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Մ. Մ. ՄԱՄԻԿՈՆՅԱՆ

Միջազգային տնտեսագիտական մտքի խոշորագույն դեմքերից մեկի՝ պրոֆ. Վահան Տոտոմյանցի անունը երկար ժամանակ հանիրավի մոռացության էր արվել ինչպես հայ, այնպես էլ ռուս տնտեսագետների կողմից, այն դեպքում, երբ նա բացառիկ դեր է ունեցել XIX դ. վերջի և XX դ. առաջին կեսի համաշխարհային տնտեսագիտական մտքի զարգացման գործում։ Այդ տարիներին նա գիտական շրջաններում հայտնի էր որպես միջազգային կոոպերատիվ շարժման ականավոր տեսաբան, և նրա անունը հնչում էր համաշխարհային համբավ վայելող տնտեսագետների թվում, մինչդեռ այսօր Հայաստանում հայտնի է միայն մասնագետների նեղ շրջանակին։

Մոսկվայի համալսարանի քաղաքատնտեսության մագիստրոս (պրիվատդոցենտ), Կիևի համալսարանի քաղաքատնտեսության և վիճակագրության դոկտոր, Մոսկվայի համալսարանի տնտեսագիտական ուսմունքների պատմության և տնտեսական կենցաղի ամբիոնի պրոֆեսոր Վ. Տոտոմյանցը հեղինակ է եվրոպական և ասիական շուրջ 20 լեզուներով հրապարակված ավելի քան 60 արժեքավոր մենագրությունների, գիտական ուսումնասիրությունների, որոնք նվիրված են տնտեսագիտության տարբեր հիմնախնդիրներին և տալիս են հեղինակի տնտեսագիտական հայացքների լիարժեք նկարագիրը։ Վ. Տոտոմյանցի շոշափած տնտեսագիտական ամենատարբեր հարցերի թվում են նաև համաշխարհային տնտեսությանն առնչվող հարցերը։

1916 թ. Պետրոգրադում լույս է տեսնում Վ. Տոտոմյանցի «Եվրոպան պատերազմից հետո տնտեսական և սոցիալական առումով» աշխատությունը[1]*, որի մեջ հեղինակը գլխավորապես ցույց է տալիս պատերազմի ընթացքում բնակչության տեղաշարժերի, հատկապես նրա թվի կրճատման ազդեցությունը Եվրոպայի սոցիալական պայմանների վրա։ Նա հանգամանորեն քննում է քաղաքային և գյուղական բնակչության, մանր և խոշոր հողատերերի, ինչպես նաև առևտրաարդյունաբերական խավի դրությունը պատերազմից հետո։ Ըստ հեղինակի, պատերազմից առավել տուժածները գտնվում են «սանդուղքի երկու ծայրագույն աստիճանների վրա». դրանք ամենակրթվածներն ու չկրթվածներն են՝ համալսարանականները և գյուղացիները։ Դրա հետևանքով խախտվում է հավասարակշռությունը հասարակության տարբեր տարրերի միջև։ «Պատերազմն ամենից շատ կրճատում է լավագույն տարրերը մտավոր կամ ֆիզիկական առումով, այսինքն՝ կրթված մարդկանց և օգտակար հողագործական աշխատանքի մարդկանց։ Ծառայողները և լիբերալ մասնագիտությունների տեր*

---

1 В. Тотомианц. Европа после войны в экономическом и социальном отношениях (Сельский вестник. Петроград. 1916).

անձինք տուժում են նաև վարձատրության առումով, քանի որ նրանց աշխատավարձը մնում է նույնը, իսկ գները կտրուկ աճում են»[2]:

Վ. Տոտոմյանցը գտնում է, որ քաղաքական առումով պատերազմը բերել է և կհասցնի արմատական փոփոխությունների։ «Համագործակցում են ոչ միայն դասակարգերն ու քաղաքական կուսակցությունները,— գրում է նա,— այլ նաև ապագայում, հնարավոր է, կփոխվի կուսակցությունների բնույթը, և նախկին սահմանումները կկորցնեն իրենց իմաստը։ Ժողովուրդները չեն մոռանա, որ ոչ քաղաքական կուսակցությունները, ոչ էլ դիվանագիտությունը չկարողացան կանխել ահավոր պատերազմը։ Կսկսվեն նոր մարդկանց և նոր ծրագրերի որոնումներ, կաճի տնտեսաֆինանսական մասը»[3]:

Տնտեսագետը, հիմնականում համամիտ լինելով իտալացի տնտեսագետ Արթուր Լաբրիոլայի տեսակետին, որը գտնում էր, թե տնտեսական կյանքի պետական կանոնակարգման միջոցով հնարավոր է մեղմել պատերազմի հետևանքները, հանգամանորեն շարադրում է Ա. Լաբրիոլայի եզրահանգումները համաշխարհային տնտեսության վրա պատերազմի անմիջական ազդեցության, այսինքն, նրա հետևանքների մասին։ Ա. Լաբրիոլան մատնանշում է պատերազմի չորս խոշոր հետևանքներ. միջազգային փոխանակության ժամանակակից ռեժիմի դադարեցումը կամ փոփոխումը, արտադրության կրճատումը, բարիքների բաշխման գործընթացի փոփոխությունը և թաքնված կապիտալի աճը։ Վերջինիս վերաբերյալ Վ. Տոտոմյանցը գրում է. «Չափազանց մեծանում է թաքնված կապիտալը, և շեշտակի բարձրանում է ռեալ կապիտալի տոկոսը։ Թաքնված կապիտալի, այսինքն՝ կոնկրետ բարիքներ չներկայացնող կապիտալի հրեշավոր աճը ապագայում նախապատրաստում է ճգնաժամ, և ժամանակակից տնտեսական գործընթացը հանգում է սպեկուլյացիայի և խաղի»[4]:

«Ներկայիս պատերազմը, ի տարբերություն նախորդների, համընդհանուր է,— գրում է Ա. Լաբրիոլան։— Բարիքների ոչնչացումը տարածվում է միջազգային շուկայի ամբողջ երկայնքով։ Ուստի, ամենայն հավանականությամբ, պատերազմի ավարտից հետո կսկսվի մարդկության պատմության մեջ չտեսնված տնտեսական անկում, և այդ անկումը հաղթահարելու համար անհրաժեշտ կլինի արագացնել անհատական տնտեսության փոխարինումը կոլեկտիվ արտեսությամբ, այսինքն, ակտիվացնել այն միջոցառումները, որոնք իրականացնում էին հասարակական կազմակերպությունները պատերազմի տարիներին... Պետությունը կկազմակերպի ժողովրդական տնտեսություն, որն ունակ է ինքնաբավարարման և քիչ է կախված մյուս պետություններից։ Փակ կամ մեկուսացված պետության տնտեսությունը կգրավի ժամանակակից միջազգային հարաբերությունների տեղը»[5]: Շատ այլ հարցերում համաձայնելով իտալացի տնտեսագետի տեսակետներին՝ Վ. Տոտոմյանցը այնուամենայնիվ նշում է, որ Ա. Լաբրիոլայի որոշ պնդումները կասկածի տեղիք են տալիս։ Վ. Տոտոմյանցը մասնավորապես գրում է. «Դժվար է պատկերացնել, որ ժամանակակից բոլոր պետությունները կցանկանան կամ կկարողանան ներփակվել իրենք իրենց մեջ՝ կտրելով բոլոր կապերը մեկը մյուսի հետ... Հայտնի է, որ ճգնաժամային պահերին ազգերը կարող են խզել իրենց կապերը և ապրել մեկու-

---

[2] Նույն տեղում, էջ 24։

[3] Նույն տեղում, էջ 37։

[4] Նույն տեղում, էջ 47։

[5] Նույն տեղում, էջ 49—50։

սացած։ Սակայն, խաղաղության հաստատումից հետո նրանք ստիպված կլինեն, նույն կամ սակաս չափով, վերականգնել ընդհատված հարաբերությունները և, այսպիսով, ենթարկվել կյանքի հիմնական օրենքին, այսինքն՝ էներգիայի փոխակերպման օրենքին, կոոպերացիայի օրենքին, այդ բառի լայն իմաստով։ Մենք չենք հավատում հրեշավոր ազգային անհատապաշտությանը այն բանից հետո, երբ արտահայտվել ենք առանձին քաղաքացիների անհատապաշտության դեմ»[6]։

Վ. Տոտոմյանցի կարծիքով, Ա. Լաբրիոլան իր ապագա տնտեսական զարգացման սխեմայում ունի ևս մեկ կարևոր բացթողում։ Նա տեղ չի հատկացնում կոոպերատիվիզմին, որը որոշ երկրներում, ինչպես օրինակ, Անգլիայում, Շվեյցարիայում և Դանիայում ունի առավել խոշոր դեր, քան պետական կապիտալիզմը։

1916 թ. լույս է տեսնում Վ. Տոտոմյանցի հերթական աշխատությունը[7], որտեղ տնտեսագետը հանգամանորեն քննարկում է Առաջին համաշխարհային պատերազմից հետո եվրոպական երկրներում, մասնավորապես Ռուսաստանում ապրանքների գների շեշտակի աճի հիմնախնդիրները։ Թանկության (սղաճի) առավել կարևոր պատճառը Վ. Տոտոմյանցը համարում է առևտրի կապիտալիստական կազմակերպումը մասնավոր անձ և (կամ) բանկ հանդիսացող միջնորդ-առևտրականների և սպեկուլյանտների բազմության միջոցով։ Նա մեջբերում է հողագործության ամերիկյան նախարարության հաշվարկները, որոնք փաստում էին, թե յուրաքանչյուր տարի գյուղատնտեսական ապրանքներ սպառողների կողմից վճարված 13 մլրդ դոլարից այդ գյուղատնտեսական ապրանքներն արտադրողները ստանում են միայն 6 մլրդ, իսկ մնացած 7 մլրդ դոլարը բաժին է ընկնում միջնորդներին։

Թանկության ամենակարևոր պատճառը Վ. Տոտոմյանցը համարում է Եվրոպայի և Ամերիկայի օրեցօր աճող ինդուստրացումը, որը հասցնում է արդյունաբերության գերաճի՝ կապված քաղաքների և առևտրաարդյունաբերական գործունեության աճի հետ։ Տնտեսագետն այս առումով մեջբերում է իտալացի հայտնի սոցիոլոգ և պատմաբան Գ. Ֆերրերոյի տեսակետը։ «Թանկության խոր պատճառը,— գրում է Գ. Ֆերրերոն,— թաքնված է ժամանակակից քաղաքների աճի, քաղաքներում մարդկանց և կապիտալի չափազանց կուտակման մեջ, որի նպատակն է զարգացնել արդյունաբերությունը և մասնավոր ու հասարակական շռայլությունը»[8]։ Կրճատվում էր հողագործությամբ զբաղվողների թիվը, նվազում են գյուղատնտեսական մթերքները, ուստի և բարձրանում են դրանց գները։ Հետևաբար, թանկության դեմ պայքարի գլխավոր միջոցը Վ. Տոտոմյանցը համարում է գյուղատնտեսության արտադրողականության բարձրացումը։ Դրա ուղիներից մեկը, ըստ նրա, այդ ոլորտում կոոպերացիայի զարգացումն է։

Ելնելով այս ամենից, Վ. Տոտոմյանցն առաջարկում է, մի կողմից, օրենսդրական խիստ միջոցներով պայքարել սպեկուլյացիայի դեմ, իսկ մյուս կողմից՝ զարգացնել կարևորագույն մթերքների, հատկապես գյուղատնտեսական մթերքների արտադրությունը։

---

[6] Նույն տեղում, էջ 51։

[7] В. Тотомианц, Кооперация и борьба с дороговизной. М., 1916.

[8] Prof. F. Coletti, IL rincaro dei viveri. Milano. 1913, p. 24.

Բոստոնում հրատարակվող «Հայրենիք» ամսագրում 1932 թ. լույս է տեսնում Վ. Տոտոմյանցի «Համաշխարհային տնտեսական տագնապը» հոդվածը, ուր տնտեսագետը հանգամանորեն լուսաբանում է տնտեսական ճգնաժամի հիմնախնդիրները։ Ճգնաժամերի տնտեսական գլխավոր պատճառը նա տեսնում է արտադրության և սպառման աննրդաշնակության մեջ։ Հետպատերազմյան շրջանում ապրանքների գների անկման հիմնական պատճառը արտադրության և սպառման միջև հավասարակշռության խախտումն էր, այլ կերպ ասած՝ արտադրության բոլոր ճյուղերում, ներառյալ գյուղատնտեսության մեջ, հարաբերական գերարտադրությունը։ Վ. Տոտոմյանցը չի ընդունում այն կարծիքը, որ տրեստների և քարտելների ստեղծման միջոցով հնարավոր է վերացնել կապիտալիստական արտադրությանը հատուկ անիշխանությունը, երբ «ժողովրդական բովանդակ տնտեսությունը նկատի ունի հիմնականում առանձին անհատների հարստացումը և, երկրորդաբար միայն, հանրության կարիքները հոգալու պահանջը։ Արդյունաբերությունը և առևտուրը չափ ու սահման չեն ճանաչում, նրանք մշտապես որոնում են նոր շուկաներ, շարունակ մտածում են վայելքների մասին»[9]:

Վ. Տոտոմյանցը կարծում է, որ ճգնաժամերն աստիճանաբար վերացնելու համար միայն մեկ միջոց կա՝ թույլ չտալ, որ տնտեսական հզորությունը կենտրոնացած մնա կապիտալիստական արդյունաբերողների ձեռքում. «Ժողովուրդը, ավելի ճիշտ՝ կազմակերպված սպառողներն են, որ աշխարհի բոլոր մասերում հրապարակ պիտի գան ու իրենց վճռական խոսքն արտասանեն և ամենքին անխտիր հիշեցնեն այն ճշմարտությունը, թե արտադրությունը բնավ ինքնանպատակ չէ, այլ միջոց է միայն, որ կոչված է ծառայելու սպառողին»[10]: Ճգնաժամերն ազդում են ոչ միայն արդյուբերության և գյուղատնտեսության, այլև առևտրի վրա։ Վ. Տոտոմյանցի կարծիքով, այդ բանում պակաս մեղավոր չէ նաև ինքը՝ առևտուրը, քանի որ «աշխարհիս վրա չափից ավելի վաճառականներ կան և, ընդհակառակը, շատ քիչ վաճառականներ, որ ազնվորեն են առևտուր տնում»[11]: Ապրուստի սղությունը պայմանավորված է, սակայն, ոչ միայն միջնորդ-խանութպանների մեծ բազմությամբ, այլև ուրիշ, մանավանդ այսպես կոչված անարտադրական զբաղմունքների տեր անձանց, հատկապես զինվորականների, հարկահավաքների ու մաքսային պաշտոնյաների թվի ավելացումով։

Վ. Տոտոմյանցի կարծիքով, տնտեսական համատարած ճգնաժամը խորանում է մանավանդ այն պատճառով, որ շահադետ կապիտալը և մասնավորապես բանկերի (որոնց թիվը չափազանց մեծ է) կապիտալները, բարձր եկամուտներ ստանալու նպատակով, ներդրվում են այնպիսի ձեռնարկներում, որոնք ամենևին չեն նպաստում երկրի տնտեսության հետագա զարգացմանը։ «Եթե թմրանյութերի վաճառքը պատիժներին կապված չլիներ, կապիտալը սիրով պատրաստակամություն պիտի հայտներ այդ կարգի ապրանքներ ևս անսահման չափերով արտադրելու»,— գրում է Վ. Տոտոմյանցը[12]: Նրան անհանդրստացնում է այն խնդիրը, որ մարդիկ, ձգտելով արագորեն հարստանալ,

---

[9] Վ. Տոտոմեանց. Համաշխարհային տնտեսական տագնապը, (Հայրենիք, մարտ, 1932, էջ 65)։

[10] Նույն տեղում։

[11] Նույն տեղում, էջ 66։

[12] Նույն տեղում, էջ 67։

գյուղերից կամ փոքր քաղաքներից տեղափոխվում են մեծ քաղաքներ՝ ավելացնելով դործադուրկների շարքերը. «Մարդիկ մոռացության են տվել այն իմաստուն խոսքը, որ ասում է՝ «երբ գյուղացին փող ունի, փող ունի և ողջ աշխարհը»[13]: Զգտելով արտաքին շուկաներ գրավել՝ մարդիկ հաճախ մոռանում են, որ կա ներքին շուկա՝ գյուղացիությունը։ Տնտեսագետն առաջարկում է բարելավել գյուղացիության վիճակը և ոչ թե նրան «զոհաբերել քաղաքային դրադմունքներին»[14]:

Ըստ Վ. Տոտոմյանցի, տնտեսական ճգնաժամը մի ուրիշ պատճառ էլ ունի, որի մասին, սակայն, շատ քիչ է խոսվում, քանի որ այն սոսկ բարոյական բնույթ է կրում։ Պատերազմը և հեղափոխությունները կտրել են համերաշխության այն բոլոր կապերը, որ գոյություն ունեին ազգերի և դասակարգերի միջև։ Պատերազմը մարդկանց շատ եսամոլ է դարձրել։ Մարդիկ մասամբ կորցրել են իրենց հավատը և հին սովորույթները, բայց դրա փոխարեն չեն ստեղծել նորերը։ Տնտեսական համատարած ճգնաժամը մեղմելու գործում Վ. Տոտոմյանցը կարևորում է համագործակցային կազմակերպության դերը, քանի որ այն կանոնավորում է տնտեսությունը՝ ի շահ ժողովրդական լայն զանգվածների։ Թեև տնտեսագետը համամիտ է այն տեսակետին, որ կապիտալիստական տրեստները և ուրիշ խմբավորումները ևս ձգտում են մեղմացնել տնտեսական անիշխանությունը, սակայն նշում է, որ դրանք հարստացնում են մարդկանց մի փոքրիկ խմբի միայն։ Իսկ համագործակցային շարժումը, ի տարբերություն կապիտալիստականի, տանում է դեպի համագործակցային ժողովրդավարություն։

Դեռևս XX դ. սկզբին Եվրոպայի առաջադեմ տնտեսագետները, այդ թվում ևՎ. Տոտոմյանցը, անհանգստանում էին Եվրոպայի՝ 26 պետությունների ազգային լեզուների և մաքսերի պատնեշներով մասնատված տնտեսական թույլ միավորի դեմ, ԱՄՆ-ի՝ խոսակցական մեկ լեզվով, մաքսային պատնեշներ չունեցող և այլազան բարիքներով հարուստ տնտեսական այս հսկա միավորի արագ զարգացման և տնտեսապես հզորացման խնդրով։ «Միթե՞ հնարավոր չէ, որ Եվրոպան բարեկարգվի, որ նրա քաղաքագետներն ըմբռնեն, թե աշխարհը կառավարողը տնտեսության լայն ուժերն են և ոչ թե քաղաքական ունայն վեճեր. հասկանան վերջապես, որ եթե չեն ցանկանում իրենց թելադրված պայմանները ընդունել, ապա ուրեմն պարտավոր են նախ և առաջ իրենց քաղաքական տնտեսական կազմակերպությունը արդիացնել»,—գրում էր այդ տարիներ «Նոր Եվրոպա» ֆրանսիական ամսագիրը[15]: Այդ հարցը, դուրս գալով անհատ հետազոտողների նեղ շրջանակից, աստիճանաբար դառնում է միջազգային տնտեսական խորհրդաժողովների քննարկման նյութ։ 1927 թ. մայիս-հունիս ամիսներին ժնևում դումարվելիք միջազգային տնտեսական խորհրդաժողովը պատրաստվում էր քննարկել ԱՄՆ-ին հակակշիռ Եվրոմիության ստեղծանը նպաստող միջազգային քարտելների, տրեստների միավորման հարցերի օրակարգն էլ ընդհանուր գծերով ներկայացնում է Վ. Տոտոմյան-

---

[13] Տոտոմյանց, Համաշխարհային տնտեսությունը և Եվրոպայի Միացյալ Նահանգները (Հայրենիք, 1927, էջ 68)։

[14] Նույն տեղում։

[15] Տե՛ս նույն տեղում, էջ 66։

ցը՝ «Համաշխարհային տնտեսությունը և Եվրոպայի Միացյալ Նահանգները» հոդվածում։ Խորհրդաժողովում քննարկվող խնդրի առնչությամբ տնտեսագետն առանձնացնում է երեք հիմնական՝ այսպես կոչված «չեզոք», «զուտ բացասական» և «միջամտողների» տեսակետներ։ «Չեզոք» տեսակետի պաշտպանները պնդում էին, թե քարտելների և տրեստների միջազգային միությունները տնտեսական որոշակի առաջադիմություն են և պետությունների միջև խաղաղ հարաբերություններ հաստատելու կարևոր նախապայման։ Նրանք պահանջում էին, որ հասարակությունը թե՛ միջազգայնորեն և թե՛ ազգայնորեն չեզոք մնա և ամեն ինչ թողնի իրերի դրությանը։ «Զուտ բացասական» տեսակետի ներկայացուցիչները ընդունում էին միջազգային որոշ քարտելների և տրեստների հզոր դերը և պահանջում էին հնարավոր բոլոր միջոցներով ու մանավանդ քարոզչությամբ պայքարել նման միությունների կազմակերպման և գոյության դեմ։ «Միջամտողների» կողմնակիցներն այն կարծիքին էին, թե «Ճարտարարվեստային (արդյունաբերական, տրեստային—Մ. Մ.) միությունները տնտեսական զարգացման մի անհրաժեշտ հանգրվան են, որի դեմ յուրաքանչյուր հակառակություն ապարդյուն պիտի անցնի»[16]։ Այդ միությունները որոշ պայմանների առկայության դեպքում կարող են ծառայել նաև տրեստների տնտեսական խաղաղության շահերին և կայունությանը։ Եվ, վերջապես, այդ միությունների գործունեության անսահմանափակ ազատությունից բխող չարիքները կարելի է կանխել վերահսկողության միջոցով, ուստի, առաջին հերթին պահանջում էին կազմակերպել այդ վերահսկողությունը։ Այս ուղղության ներկայացուցիչների համար տրեստների, քարտելների միությունները կազմելու խնդիրը նույնանում էր դրանց միջազգային վերահսկողության։

Համագործակցային ընկերությունների ստեղծումը և միջազգային քարտելների կազմակերպումը Վ. Տոտոմյանցը համարում է «Եվրոպայի Միացյալ Նահանգների ստեղծման նախաքայլ»[17]։

Ականավոր տնտեսագետի աշխատությունները ոչ միայն պատմական, այլև արդիական բացառիկ նշանակություն ունեն։ Դրա վկայությունն է այն, որ սկսած 1957 թ. եվրոպական երկրները նախաձեռնեցին Եվրոմիության ստեղծման առաջին քայլերը. Գերմանիան, Ֆրանսիան, Իտալիան, Բելգիան, Նիդեռլանդները և Լյուքսեմբուրգը 1957 թ. հիմնեցին Եվրոպական տնտեսական համայնքը, իսկ 1967 թ. հիմնվեց Եվրոպական համայնքը։ 1991 թ. Մաստրիխտի համաձայնագրով Եվրոպական համայնքը վերանվանվեց Եվրոպական միության, որի կազմում են 15 եվրոպական երկրներ՝ Ավստրիան, Բելգիան, Գերմանիան, Դանիան, Իռլանդիան, Իտալիան, Իսպանիան, Լյուքսեմբուրգը, Հունաստանը, Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորությունը, Նիդեռլանդները, Շվեդիան, Պորտուգալիան, Ֆինլանդիան և Բանսիան։ 1999 թվականից այդ երկրներում միասնական արժույթի՝ «եռ»-ի շրջանառության մեջ մտնելը հնարավորություն կտա ստեղծել միասնական եվրոպական շուկա և ավարտին կհասցնի Եվրոպայի տնտեսական քաղաքականության միասնականացումը։

---

[16] Նույն տեղում։

[17] Նույն տեղում, էջ 67։

ВОПРОСЫ МИРОВОЙ ЭКОНОМИКИ В ТРУДАХ ВАГАНА ТОТОМЯНЦА

М. М. МАМИКОНЯН

Резюме

Ваган Тотомянц внес исключительный вклад в развитие как российской, так и мировой экономической мысли в конце XIX начале XXвв.

В центре внимания экономиста были тенденции развития экономики европейских и других стран. Он считал, что I мировая война в экономическом и социальном отношениях радикально изменила экономику Европы. Одной из основных причин растущей инфляции В. Тотомянц считал капиталистическую форму торговли, опосредованную множеством спекулянтов и торговых посредников, а главную причину роста цен он видел в растущей индустриализации Европы и Америки.

Экономические кризисы В. Тотомянц объяснял несоответствием между производством и потреблением. В целях недопущения экономических кризисов он утверждал, что экономическая мощь не должна концентрироваться в руках капиталистических производителей.

Еще в начале XX века многие прогрессивные экономисты, в том числе и В. Тотомянц, подчеркивали важность создания Соединенных Штатов Европы в противовес быстро развивающимся Соединенным Штатам Америки. Создание международных союзов производителей и потребителей, усовершенствование форм разнообразных кооперативных союзов и развитие международного сотрудничества в целом, по мнению автора, станут важной предпосылкой в деле экономического объединения европейских стран.